Կարծիք

Գառնիկ Աշոտի Գևորգյանի «Պետության տնտեսական ինքնիշխանության կառավարչական հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.02 «Տնտեսության և նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման վերաբերյալ

1. Ատենախոսության թեմայի արդիականությունը: Արդի ժամանակաշրջանի բազմաբնույթ պայմաններում աշխարհի 200-ից ավել բոլոր պետություններն օբյեկտիվորեն բախվում են անհրաժեշտ մակարդակի տնտեսական ինքնիշխանություն ապահովելու բարդ և դինամիկ հիմնախնդիրներին լուծումներ տալու անհրաժեշտությանը: Այստեղ առաջին պլան է մղվում վերջին տասնամյակներում համաշխարհային տնտեսության մեջ անընդհատ աճող համաշխարհայնացման և ինտեգրացիոն գործընթացների ազդեցությունը, որի հետևանքով բոլոր պետությունները ստիպված են տարբեր չափերով կորցնել իրենց տնտեսական ինքնիշխանության մի մասը՝ նպատակ ունենալով ստանալ համաշխարհային բարիքի իրենց «հասանելի մասնաբաժինը»:

Երկրների տնտեսական ինքնիշխանության վրա մեծ ազդեցություն ունեն վերազգային կորպորացիաները (Apple, Amazon և այլն) և միջազգային խոշոր կազմակերպությունները (ՄԱԿ, Համաշխարհային բանկ, Առևտրի համաշխարհային կազմակերպություն և այլն), ինչն էլ անխուսափելիորեն հանգեցնում է երկրների տնտեսական ինքնիշխանության նվազմանը:

Պետությունները համաշխարհային տնտեսական գործընթացներին մասնակից դառնալու, ինչպես նաև իրենց անվտանգությունն ապահովելու նպատակով անդամակցում են վերպետական կազմակերպություններին և միություններին (ՆԱՏՕ, ԵԱՏՄ, ԵՄ և այլն), որը հանգեցնում է իրենց տնտեսական ինքնիշխանության նվազմանը: Վերոնշյալ գործոնները տարբեր չափերով առկա

են նաև Հայաստանի Հանրապետությունում: Մեր երկրի համար դրանք ունեն ինչպես կառավարչական, այնպես էլ ռազմավարական նշանակություն, հենց վերջինիս ուսումնասիրությամբ և վերլուծություններով է պայմանավորված ատենախուսության թեմայի արդիականությունը:

2. <u>Ուսումնասիրության առարկան և օբյեկտը:</u> Ատենախոսությունը նվիրված է արդի համաշխարհայնացման պայմաններում Հայաստանի ինքնիշխանության նվազագույն կորուստների ապահովմանը և դրան ուղղված սպառնալիքների հաղթահարման ուղիների մշակմանը:

   Ատենախոսության ուսումնասիրման առարկան ՀՀ տնտեսական ինքնիշխանությանը սպառնացող հիմնախնդիրներն են, իսկ ուսումնասիրության օբյեկտը՝ երկրում կիրառվող կառավարչական մոտեցումները:

3. <u>Ուսումնասիրության նպատակը և հիմնախնդիրները:</u> Ուսումնասիրության նպատակն է՝ գնահատել և վերլուծել Հայաստանի տնտեսական ինքնիշխանության վրա ազդող հիմնական գործոնները և առաջարկել տնտեսական ինքնիշխանության մակարդակի բարձրացման ուղիներ: Այդ նպատակի իրականացման համար սահմանվել են հետևյալ հիմնախնդիրները

   - Ուսումնասիրել «տնտեսական ինքնիշխանություն» եզրույթի՝ մասնագիտական գրականության շրջանակներում ներկայացված տեսությունները
   - Հետազոտել և վերլուծել տնտեսական ինքնիշխանության վրա ազդող կարևորագույն գործոնները
   - Վերլուծել ՀՀ տնտեսական ինքնիշխանության անբարենպաստ գործոնների բնութագրերը և առաջարկել դրանց ազդեցության նվազեցման լուծումները
   - Առաջարկել ՀՀ տնտեսական ինքիշխանության պաշտպանությանն և դրա մակարդակի բարձրացմանն ուղղված մոտեցումներ

4. Ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել մասնագիտական գրականության ժամանակակից տեսությունները, տնտեսական ինքնիշխանության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան մասնագետների հետազոտությունները: Ուսումնասիրվել և վերլուծել է ՀՀ ինքնիշխանության համապատասխան իրավական դաշտը: Տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ պետական կառավարման մարմինների վիճակագրական հաշվետվությունները:
5. Ուսումնասիրության հիմնական գիտական արդյունքները և գիտական նորույթը:
   - Մշակվել է տնտեսական ինքնիշխանության գնահատման և կառավարելիության գործակիցների հաշվարկման մեթոդաբանություն՝ համապատասխան ցուցանիշների համակարգի հիման վրա:
   - Առաջարկվել է «տնտեսական ինքնիշխանություն» եզրույթի նոր սահմանում՝ հիմնված դրա ներքին և արտաքին բաղադրիչների բաժանման վրա:
   - Ներկայացվել է ազգային տնտեսությունում կատարած օտարերկրյա ուղղակի ներդրումների բազմատեսականացման սկզբունքը՝ նպատակ ունենալով նվազեցնել դրանց ազդեցության չափը երկրի տնտեսական ինքնիշխանության վրա:
   - Առաջարկվում է ընդունել «ՀՀ տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հայեցակարգ» և վերոնշյալ հայեցակարգի շրջանակներում, որպես անկախ մարմին, ստեղծել տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հանձնաժողով, որը կգբաղվի տնտեսական ինքնիշխանության պաշտպանության պետական քաղաքականության մշակմամբ:

6. Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության գիտագործնական դրույթները, եզրակացություններն ու առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ երկրի տնտեսական ինքնիշխանության պաշտպանության քաղաքականության մշակման և իրացման գերծընթացներում:

7. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններ և առաջարկություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներց: Այն շարադրված է 165 էջի վրա: Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության թեմայի ուսումնասիրման աստիճանը, ձևակերպվել հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացվել է հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսական ինքնիշխանությունը՝ որպես կայուն տնտեսական զարգացման կարևոր գործոն» գլխում ներկայացվել են «տնտեսական ինքնիշխանություն» եզրույթի սահմանումներն ու դասակարգումները, դրանց համապատասխան վերլուծությունները, տրվել են վերոնշյալ ոլորտի տարբեր հեղինակների «տնտեսական ինքնիշխանության» բնութագրերը, որոնց հաջորդել են հեղինակի մեկնաբանություններն ու վերլուծությունները:

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսական ինքնիշխանության կառավարչատնտեսական հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները ՀՀ-ում» գլխում իրականացվել է տնտեսական ինքնիշխանության վրա ազդող կարևորագույն գործոնների քանակական գնահատում և վերլուծություն: Մասնավորապես, հեղինակը հանգել է այն եզրակացությանը, որ երկրի բնակչության թվի նվազումը կարող է հանգեցնել տնտեսական ինքնիշխանության անկմանը:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ տնտեսական ինքնիշխանության մակարդակի կարգավորման կառավարչական մեթոդների կատարելագործման եվ տնտեսական

ինքնիշխանության ամրապնդման հիմնական գերակայությունները» գլխում ներկայացվել է երկրի տնտեսական ինքնիշխանության մակարդակին քանակական գնահատում տվող գործակիցների հաշվարկման մեթոդաբանություն, որի հիման վրա գնահատվել է ՀՀ տնտեսական ինքնիշխանության աստիճանը 2012, 2015, 2019, 2021 թվականներին: Հատկապես կարևորվում է հեղինակի այն առաջարկությունը, որով նախատեսվում է մշակել և ընդունել «ՀՀ տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հայեցակարգ» և դրա հիման վրա ստեղծել տնտեսական ինքնիշխանության պաշտպանությամբ զբաղվող անկախ սահմանադրական հանձնաժողով:

8. <u>Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ</u>:

- Կարծում եմ՝ անպայման պետք է ներառվեր հայ ժողովրդի գոյաբանական կարևոր գործոնները՝ գրականության, լեզվի, հավատի, մշակույթի, ազգային ավանդույթների, ազգային պատմական հիշողության ազդեցությունը պետության տնտեսական ինքնիշխանության մակարդակի փոփոխության վրա:
- Ատենախսության 73-րդ էջում նշվում է, որ 2010-2020թթ-ին ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքում կրթության ոլորտի պետական ծախսերը կազմում են 2-2,7 տոկոսի միջակայքում, որը խիստ ցածր ցուցանիշ է ապագայում անհրաժեշտ մակարդակի գիտատար տնտեսության ինստիտուցիոնալ համակարգ ձևավորելու համար, սակայն ոչ պակաս կարևոր է այդ ներդրումների օգտագործման արդյունավետության գնահատումը;
- Ատենախսության 3.1՝ «Տնտեսական ինքնիշխանության գնահատման և կառավարման գործակիցները» ենթագլխում նշվում են երկրի տնտեսական ինքնիշխանության մակարդակի վրա ազդեցության կշռային գնահատումները՝ ա) օտարերկրյա ուղղակի ներդրումներ 0.3, բ) արտաքին պետական պարք 0.3 և այլն, ինչպես նաև երկրների

դասակարգումը 3 խմբերի. 0-0,3՝ ինքնիշխանության ցածր մակարդակ, 03-0.7՝ ինքնիշխանության միջին մակարդակ, 0,7-ից բարձր՝ ինքնիշխանության բարձր մակարդակ ունեցող երկրներ: Այստեղ անհրաժեշտ էր իրականացնել ավելի խոր գիտագործնական հիմնավորումներ, իսկ հնարավորության սահմաններում կիրառել առավել ճշգրիտ էկոնոմետրիկ մեթոդներ:

- Ատենախոսությունը կհայտնվեր առավել շահեկան վիճակում, եթե քննարկվեին ՀՀ տնտեսական ինքնիշխանության և անվտանգության ինստիտուտների փոխառնչությունները:

9. <u>Եզրակացություն:</u> Նշված դիտողությունները ամենևին չեն նվազեցնում ատենախոսության գիտագործնական արժանիքները և ստացված արդյունքները: Գառնիկ Աշոտի Գևորգյանի «Պետության տնտեսական ինքնիշխանության կառավարչական հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» հետազոտությունն ինքնուրույն աշխատանք է: Ատենախոսությունում օգտագործված գիտական արդյունքները հիմնավորված են և ընդունելի: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր, գործադիր մամիններին, ինչպես նաև բաձրագույն կրթական համակարգի ներկայացուցիչների կողմից: Լինելով ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն՝ ատենախոսությունը հագեցած է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն ունեցող նյութերով, որին նպաստել է մեծ թվով մասնագիտական գրականության օգտագործումը և վերլուծությունը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական բովանդակությունը արտացոլված է հեղինակի 7 գիտական հոդվածներում: Ընդհանուր առմամբ՝ Գառնիկ Աշոտի Գևորգյանի «Պետության տնտեսական ինքնիշխանության կառավարչական հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ

գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին , իսկ հեղինակը արժանի է Ը.00.02 «Տնտեսության և նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԵՊՀ «Տնտեսագիտության և կառավարման» ֆակուլտետի
«Նորարարության տնտեսագիտության» ամբիոնի
պրոֆեսոր՝ Ս. Ա. Դավոյան:
28.04.2023թ

Պարոն Ս. Ա. Դավոյանի
ստորագրության իսկությունը հաստատում եմ:
ԵՊՀ գիտական քարտուղար
Մերի Հովհաննիսյան:
28.04.2023թ